**ՏՊԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆՄԱՆ**
**ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԴԾԻԳ-ՇՀԱՇՁԲ-15-11/4-1**

<<27>> 03 **2015թ.**

Ք. Երևան

**Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարությունն** ի դեմս աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար **Արմեն Գևորգյանի**, որը գործում է Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության աշխատակազմի կանոնադրության հիման վրա **(այսուհետև՝ Պատվիրատու)**, մի կողմից, և **«Ակադա պրինտ » ՍՊԸ-ն, ի դեմս Ա.Ադամյանի (այսուհետև՝ Կատարող)**, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **«Հատուկ պաշտպանվածություն պահանջող պետական նշանակության փաստաթղթերի տպագրական աշխատանքներ»** իրականացման պարտավորությունը **(այսուհետև՝ Աշխատանք)**՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող **N 1 հավելվածով** սահմանված Տեխնիկական բնութագրի պահանջների:

1.2 Աշխատանքները կատարվում են սույն պայմանագրի **N 1 հավելվածով** սահմանված Տեխնիկական բնութագրի և **N2 հավելվածով** սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի **N 1 հավելվածում** նշված Տեխնիկական բնութագրի և **N 2 հավելվածում** նշված գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանք սույն պայմանագրին համապատասխանող աշխատանքի անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել **N 1 հավելվածում** նշված Տեխնիկական բնութագրին և **N 2 հավելվածում** նշված գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 **N 1 հավելվածում** նշված Տեխնիկական բնութագրին և **N 2 հավելվածում** նշված գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված աշխատանքի արդյունքը Պատվիրատուից կողմից ընդունվելու դեպքում, Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Սույն պայմանագրի **N 1 հավելվածում** նշված Տեխնիկական բնութագրին և **N 2 հավելվածում** նշված ...ն ժամանակացույցին համապատասխան ապահովել աշխատանքի իրականացումը՝ ղեկավարվելով գործող ...նսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին անհապաղ գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Եթե շինարարական աշխատանքների երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կատարողը պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Պատվիրատուին վճարում է տուգանք՝ հայտնաբերված թերության վերացման համար կապալառուի կամ Պատվիրատուի կողմից իրականացված փաստացի ծախսերի չափով:

### 3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ:

Կատարողը աշխատանքի իրականացման ավարտից 2 օրացուցային օրվա ընթացքում Պատվիրատուին է հանձնում կատարված աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 3 օրինակ (**Հավելված N 4**):

3.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 2 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի իրականացման ենթակա Աշխատանքի ընդհանուր գինը կազմում է **10780000 (տասը միլիոն յոթ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ**: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրականացված աշխատանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի **N 3 հավելվածով** սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված կարգով (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2015թ. դեկտեմբերի 25-ը:

### 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Աշխատանքի իրականացման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի **N 1 հավելվածում** նշված Տեխնիկական բնութագրին և **N 2 հավելվածում** նշված գնման ժամանակացույցին չհամապատասխանող Աշխատանք իրականացնելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի իրականացման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և պահվում են Աշխատանք իրականացնելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենքներով սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը

7.2 Այն դեպքում, երբ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքների շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքների ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը ․․անում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Աշխատանքի իրականացման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը ․․պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

7.4 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.6 Սույն պայմանագիրը (ներառյալ հավելվածները) կազմված է **10 (տասը) էջից**, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի **N1, N2, N3, N4** հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.7 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.8 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| ՀՀ արդարադատության նախարարություն | «Ակադա պրինտ» ՍՊԸ |
| ք. Երևան, Հալաբյան 41ա | ՀՀ, ք. Երևան, Շիրազի 50շ. բն42 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | «Ամերիաբանկ»ՓԲԸ |
| ՀՎՀՀ 02506264 | Հ/Հ 1570010113680100 |
| Հ/Հ 900011194215 | ՀՎՀՀ 01235027 |
| ---------------- (ստորագրություն) Կ.Տ | (ստորագրություն) Կ.Տ |

**Հավելված N 1**
**«27» « 03 » 2015 թ. կնքված**
**N ԴԾԻԳ-ԾՀԱԾՁԲ-15-11/4-1 պայմանագրի**

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

| Հ/Հ | Գնման առարկայի անվանումը | | Տեխնիկական բնութագիրը | Քանակը /հատ/ |
|---|---|---|---|---|
| 1. | **Քաղաքացիական կացության ակտերի գրանցման վկայականներ** | Ամուսնության վկայական | **Չափսերը՝** 20սմ x 13սմ, յուրաքանչյուր վկայական ունենում է իր գունային և այլ առանձնահատկությունները: Թուղթը՝ ջրանիշով պաշտպանված (ջրանիշը՝ ՀՀ զինանշան (յուրաքանչյուր ձևաթղթի ամբողջ մակերեսով, ոչ պակաս 5 (հինգ) հատից, որոնց մի մասի պատկերը վերջնական արտադրանքի կտրման ընթացքում կարող է երևալ ոչ ամբողջական, ոչ պակաս 2 երանգից: Ջրանիշը նաև պետք է պարունակի Հայաստանի Հանրապետություն բառերի առաջին տառերը, այսինքն՝ ՀՀ նշումով: **Թուղթը՝** 120 գր/մ$^2$ խտությունից ոչ պակաս, 100% ցելյուլոզայից, ջարդվածքի ամրությունը ոչ պակաս 12-ից՝ երկկողմանի ջարդվածքների դեպքում, առնվազն 2 գույնի պաշտպանիչ մանրաթելերով, որոնցից մեկը տեսանելի անզեն աչքով, մյուսը տեսանելի ուլտրամանուշակագույն լույսի ներքո, լուսարձակման պայծառությունը ոչ ավել 0.9 կդ/Վտ: Յուրաքանչյուր մանրաթելերը ոչ պակաս 15 հատ 1 դմ$^2$ վրա, շուրջ 4 մմ երկարությամբ: Թղթի անթափանցելիությունը ոչ պակաս 88%, խոնավությունը շուրջ 5%: **Պաշտպանիչ դիզայնը՝** նշված տեխնիկական բնութագրի (արտաքին դիզայնը և տպագրությունը) համաձայն տրամադրված մեկ թուղթ իրենից ներկայացնող բնօրինակին, որը պետք է պարունակի բազմագույն և բազմատեսակ տպագրական եղանակներ ներառող բաղադրիչներ, թաքնված պատկեր, տպագրական ցանց՝ գունային փոփոխություններով և գիլյոշիրային յուրատեսակ բաղադրիչներ պարունակող էլեմենտների նմանեցված տեսքով, միկրոտեքստ, անհատական համարակալում՝ տարբերվող տպագրական և գունային տեսքով, տեքստային մաս, ինչպես նաև ալյումինե հիմքով ՀՀ զինանշանի ոսկեգույն (ոսկեզօծ) բարձրորակ անվնաս դաջվածք: Տպագրությունը բազմաեղանակ՝ թվային, օֆսեթ տպագրություն 4 և ավել գույնի, բարձր տպագրություն ՝ տարբեր հարթություններով (ուռուցիկ կամ խորացված) ոսկեգույն դաջվածք (կոնգրև): **Համարակալումը՝** թվային եղանակով, անզեն անչքով պարզ երևացող: **Փաթեթավորումը՝** 500-ական համարներով առանձնացված փաթեթավորումներով, պոլիէթիլենով փաթեթավորված՝ անվանումների և համարների նշումով, այնուհետև թղթով փաթեթավորված, որոնց | **8860** |
| | | Ծննդյան վկայական | | **26000** |
| | | Մահվան վկայական | | **16000** |
| | | Հայրության ճանաչման վկայական | | **6000** |
| | | Ամուսնալուծության վկայական | | **2400** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | Անվան, ազգանվան, հայրանվան փոխման վկայական | վրա տպագրական եղանակով փակցված լինի քանակները, համարակալումները և անվանումը:<br>**Առաքումը**- Ընկերությունը կազմակերպում է առաքումը Պատվիրատուի կողմից նշած հասցեներով:<br>**Վկայականները պետք է պատրաստվեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի ապրիլի 14-ի թիվ 469Ն որոշման Հավելված N2-ի համաձայն:** | 400 |
| 2. | Ապոստիլ | Ապոստիլ | Չափսերը՝ 12սմ x 12սմ, յուրաքանչյուր վկայական ունենում է իր գունային և այլ առանձնահատկությունները: Թուղթ՝ ջրանիշով պաշտպանված (ջրանիշը՝ ՀՀ զինանշան (յուրաքանչյուր ձևաթղթի ամբողջ մակերեսով, ոչ պակաս 2 (երկու) հատից, որոնց մի մասի պատկերը վերջնական արտադրանքի կտրման ընթացքում կարող երևալ ոչ ամբողջական, ոչ պակաս 2 երանգից: Ջրանիշը նաև պետք է պարունակի Հայաստանի Հանրապետություն բառերի առաջին տառերը, այսինքն՝ **ՀՀ** նշումով:<br>**Թուղթը՝** 120 գր/մ$^{2}$ խտությունից ոչ պակաս, 100% ցելյուլոզայից, ջարդվածքի ամրությունը ոչ պակաս 12-ից՝ երկկողմանի ջարդվածքների դեպքում, առնվազն 2 գույնի պաշտպանիչ մանրաթելերով, որոնցից մեկը տեսանելի անզեն աչքով, մյուսը տեսանելի ուլտրամանուշակագույն լույսի ներքո, լուսարձակման պայծառությունը ոչ ավել 0.9 կդ/Վտ: Յուրաքանչյուր մանրաթելերը ոչ պակաս 15 հատ 1 դմ$^{2}$, շուրջ 4 մմ երկարությամբ: Թղթի անթափանցելիությունը ոչ պակաս 88%, խոնավությունը շուրջ 5%:<br>**Պաշտպանիչ դիզայն**<br>Պաշտպանիչ դիզայնը՝ համաձայն տրամադրված բնօրինակի, որը պետք է պարունակի բազմագույն և բազմատեսակ տպագրական եղանակներ ներառող բաղադրիչներ, թաքնված պատկեր, տպագրական ցանց՝ երանգային փոփոխություններով և գիլյոշիրային յուրատեսակ բաղադրիչներ պարունակող էլեմենտների նմանեցված տեսքով, միկրոտեքստ, անհատական համարակալում՝ տարբերվող տպագրական և գունային տեսքով, տեքստային մաս: Տպագրությունը գունավոր՝ օֆսեթ:<br>**Համարակալումը՝** թվային եղանակով, անզեն անչքով պարզ երևացող:<br>**Փաթեթավորումը՝** 500-ական համարներով առանձնացված փաթեթավորումներով, որոնց երկու փաթեթը՝ մեկ կապ է կազմում՝ այսինքն մեկ կապը 1000 հատիկով, պոլիէթիլենով փաթեթավորված՝անվանումների և համարների նշումով,այնուհետև թղթով փաթեթավորված,որոնց վրա տպագրական եղանակով փակցված լինի քանակները,համարակալումները և անվանումը:<br>**Առաքումը**- Ընկերությունը կազմակերպում է առաքումը Պատվիրատուի կողմից նշած հասցեներով: | 8000 |

Յուրաքանչյուր վկայական և ապոստիլ պետք է տրված լինի սույն պայմանագրի N1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրին խիստ համապատասխան:

** Նախքան աշխատանքների կատարումը և ապրանքների մատակարարումը՝ Կատարողը պետք է յուրաքանչյուր վկայականի և ապոստիլի նմուշը համաձայնեցնի Պատվիրատուի հետ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ արդարադատության նախարարություն

ք. Երևան, Հալաբյան 41ա

ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

ՀՎՀՀ 02506264

Հ/Հ 900011194215

---------------------

(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Ակադա պրինտ» ՍՊԸ

ՀՀ, ք. Երևան, Շիրազի 50շ. բն42

«Ամերիաբանկ»ՓԲԸ

akadaprint@mail.ru

Հ/Հ 1570010113680100

ՀՎՀՀ 01235027

Հավելված N 2
«27» « 03 » 2015 թ. կնքված
N ԴԾԻԳ-ՇՀԱՇՁԲ-15-11/4-1 պայմանագրի

# ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/Հ | Գնման առարկայի նկարագիրը | | միա վոր | Նախատեսվում է ձեռքբերել 2015 թվականի ընթացքում, ընդ որում՝ | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | 1-ին եռամ սյակ | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամ սյակ | 4-րդ եռամ սյակ | Ընդամենը |
| 1 | **Քաղաքացիական կացության ակտերի գրանցման վկայականներ** | Ամուսնության վկայական | հատ | - | **8860** | - | - | **8860** |
| | | Ծննդյան վկայական | հատ | - | **26000** | - | - | **26000** |
| | | Մահվան վկայական | հատ | - | **16000** | - | - | **16000** |
| | | Հայրության ճանաչման վկայական | հատ | - | **6000** | - | - | **6000** |
| | | Ամուսնալուծության վկայական | հատ | - | **2400** | - | - | **2400** |
| | | Անվան, ազգանվան, հայրանվան փոխման վկայական | հատ | - | **400** | - | - | **400** |
| **2** | **Ապոստիլ** | Ապոստիլ | հատ | - | **8000** | - | - | **8000** |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ արդարադատության
նախարարություն
ք. Երևան, Հալաբյան 41ա
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական
վարչություն
ՀՎՀՀ 02506264
Հ/Հ 900011194215

(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Ակադա պրինտ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Շիրազի 50շ. բն42
«Ամերիաբանկ»ՓԲԸ
akadaprint@mail.ru
Հ/Հ 1570010113680100
ՀՎՀՀ 01235027

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 3
«27» « 03 » 2015 թ. կնքված
N ԴԾԻԳ-ԾՀԱԾՁԲ-15-11/4-1 պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/Հ | Գնման առարկայի անվանումը | Չափման միավորը | Վճարումները նախատեսվում է կատարել Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին, ընդ որում՝ | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | I եռամսյակ (քանակը) | II եռամսյակ (քանակը) | III եռամսյակ (քանակը) | IV եռամսյակ (քանակը) | Ընդամենը (քանակը) |
| | ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմ | | | | | | |
| 1. | **Քաղաքացիական կացության ակտերի գրանցման վկայականներ** | հատ | 0 | 10700000 | 10700000 | 10700000 | 10700000 |
| 2. | **Ապոստիլ** | հատ | 0 | 80000 | 80000 | 80000 | 80000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ՝ | | | | | | **10780000(տասը միլիոն յոթ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ** |

**Վճարումները ներկայացված են ամբողջական կարգով՝ ՀՀ դրամներով:**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ արդարադատության նախարարություն
ք. Երևան, Հալաբյան 41ա
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02506264
Հ/Հ 900011194215

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Ակադա պրինտ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Շիրազի 50շ. բն42
«Ամերիաբանկ»ՓԲԸ
akadaprint@mail.ru
Հ/Հ 1570001[illegible]00100
ՀՎՀՀ 01235027

(ստորագրություն)
Կ.Տ.

**Հավելված N 4**
**«27» « 03 » 2015 թ. կնքված**
**N ԴԾԻԳ-ԾՀԱԾՁԲ-15-11/4-1 պայմանագրի**

Կատարող
________________________
________________________
գտնվելու վայրը ____________
հհ ____________________
________________________
հվհհ __________________

Պատվիրատու
________________________
________________________
գտնվելու վայրը ____________
հհ____________________
________________________
հվհհ__________________

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

<<____>> <<__________________>> 20 թ.

Պայմանագրի անվանումը՝ ____________________________________________________
____________________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ <<____>> <<________________>> 20 թ.
Պայմանագրի համարը՝ _________
Պատվիրատուն՝ ի դեմս _________________________________________________ և Կատարողը՝ ի դեմս_________________________________________________, հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները, մատակարարումները և ծառայությունները (այսուհետև՝ աշխատանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը __ _________ 20___թ-ից __ _________ 20__ թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները

| Գնման առարկայի անվանումը | Գնման առարկայի քանակական ցուցանիշը | Աշխատանքների կատարման ժամկետը | Վճարման ենթակա գումարը (հազար դրամ) | Վճարման ժամկետը (ըստ ժամա-նակացույցի) |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| Ընդամենը | | | | |

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց
______________________________
ստորագրություն
______________________________
Ազգանուն, Անուն

Աշխատանքը ընդունեց
______________________________
ստորագրություն
______________________________
Ազգանուն, Անուն

## ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ
## N ԴԾԻԳ-ԾՀԱԾՁԲ-15-11/4-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

**ք. Երևան** «27» 03 **2015թ.**

**«Ակադա պրինտ » ՍՊԸ-ն, ի դեմս Ա.Ադամյանի**, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի համաձայնությունը.

### 1. Համաձայնության առարկան

1.1 Հաշվի առնելով, որ **Ընկերությունը ՀՀ արդարադատության նախարարության՝ ի դեմս աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար Արմեն Գևորգյանի** հետ ՇՀ գնման ընթացակարգով թիվ **ԴԾԻԳ-ԾՀԱԾՁԲ-15-11/4-1** «**Հատուկ պաշտպանվածություն պահանջող պետական նշանակության փաստաթղթերի տպագրական աշխատանքներ**» <<27 >> <<03>> **2015թ** կնքված գնման պայմանագրով Ընկերության ստանձնած պարտավորությունների պատշաճ, ժամանակին և ամբողջ ծավալով կատարումն ապահովելու նպատակով Ընկերությունը սահմանում է իր հետևյալ պատասխանատվությունը.

1.1.1 Թիվ **ԴԾԻԳ-ԾՀԱԾՁԲ-15-11/4-1** «**Հատուկ պաշտպանվածություն պահանջող պետական նշանակության փաստաթղթերի տպագրական աշխատանքներ**» գնման պայմանագրից բխող պարտավորությունների կատարումից խուսափելու կամ հրաժարվելու, ինչպես նաև գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում, Ընկերությունը Պատվիրատուին վճարում է տուժանք՝ **1078000 (մեկ միլիոն յոթանասունութ հազար) ՀՀ դրամ** Պատվիրատուն իրավունք ունի Ընկերության կողմից սույն համաձայնության 1.1.1 կետում նշված պարտավորությունների չկատարելու կամ ոչ պատշաժ կատարելու դեպքում նշված գումարի գանձման պահանջ ներկայացնել Ընկերությանը, որը Ընկերությունը անվերապահորեն կկատարի նման պահանջ ստանալու օրվանից 5 բանկային օրվա ընթացքում:

1.2 Ընկերությունն իրավունք է վերապահում Պատվիրատուին, առանց նախնական պահանջ ներկայացնելու, անվիճելի և անառարկելի կարգով գանձել համապատասխան գումար, սույն համաձայնության 1.1.1 կետում նշված գումարի սահմաններում, Ընկերությանը սպասարկող **«Ամերիաբանկ » ՓԲԸ** -ում կամ Ընկերությանը սպասարկող ցանկացած այլ բանկում բացված՝ Ընկերության ցանկացած հաշվից: Սույնով **«Ակադա պրինտ» ՍՊԸ**-ն հանձնարարում **«Ամերիաբանկ » ՓԲԸ** -ին, ինչպես նաև իրեն սպասարկող բոլոր բանկերին, սույն համաձայնության գործողության ամբողջ ժամկետի ընթացքում Պատվիրատուի առաջին իսկ պահանջով և հետագա բոլոր պահանջներով տուժանքի մասին սույն համաձայնության հիման վրա Ընկերության բանկային հաշիվներից անակցեպտ /անվիճելի/ կարգով գանձել պահանջվող գումարը:

### 2. Այլ պայմաններ

2.1 Տուժանքի սույն համաձայնությունն ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից ստորագրման և կնքման պահից և գործում է մինչև պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

2.2 Սույն համաձայնությունը չի կարող վաղաժամկետ դադարել, Ընկերության կողմից հետ կանչվել, փոփոխվել կամ այլ կերպ դադարել առանց Պատվիրատուի գրավոր համաձայնության:

***2.3*** Սույն համաձայնության կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով:

Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Ակադա պրինտ» ՍՊԸ

ՀՀ, [illegible] $50_2$. բն42

«Ամերիաբանկ» ՓԲԸ

Հ/Հ [illegible]

ՀՎՀՀ 01235027